

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. փետրվարի 2-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրայելյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավագոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի քարտուղարը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. 18.12.2022թ-ի «Եղվարդ ֆգ»-«Էկովիլ ֆգ» (ՖԶԲԽ-039) խաղի ժամանակահատվածում «Էկովիլ» թիմի ֆուտբոլիստ Արման Դանիելյանի կողմից խաղը սպասարկող մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալը:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Էկովիլ» թիմի ֆուտբոլիստ Արման Դանիելյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 49.19 կետը «Էկովիլ» թիմի ֆուտբոլիստ Արման Դանիելյանին որակազրկել մեկ խաղով և «Էկովիլ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

2. 21.01.2023թ-ի «Նոր Հաճն»-«Կարմիր Արծիվներ» (ՖԶԱԽ-025) խաղի ժամանակահատվածում «Նոր Հաճն» թիմի երկրպագուների կողմից խաղը սպասարկող մրցավարի և մրցակից թիմի հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալը:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Նոր Հաճն» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 48.12 կետը՝ «Նոր Հաճն» թիմին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

3. 16.01.2023թ-ին «Փյունիկ-2-08» թիմի՝ սեփական դիմումի համաձայն ՀՖՖ մանկապատանեկան ֆուտբոլի Մ-15 տարիքային խմբի առաջնության հետագա մասնակցությունից հրաժարվելը:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Փյունիկ-2-08» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 3-րդ կետը՝ հեռացնել «Փյունիկ-2-08» թիմին առաջնությունից՝ հաջորդ մրցաշրջանում միայն C խմբում հանդես գալու հնարավորությամբ և «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20000 ՀՀ դրամի չափով:

4. 30.12.2022թ-ին «Շիրակ ՖԱ» ՀԿ-ի՝ ֆուտբոլիստ Գրիգոր Մուրադյանի (19543) պայմանագիրը լուծելու մասին տեղեկատվությունը 15-օրյա ժամկետում ՀՖՖ գրանցման չներկայացնելը:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Շիրակ ՖԱ» ՀԿ-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 66-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10000 ՀՀ դրամի չափով: